ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ 02/107.3/06058-2019
«22» 08 2019 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ, ԱԽԹԱԼԱ,
ՏԱՇԻՐ, ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ, ՕՁՈՒՆ,
ԼՈՌԻ ԲԵՐԴ, ՄԵԾԱՎԱՆ, ՍԱՐՉԱՊԵՏ, ԱՐՋՈՒՏ,
ՀԱԼԱՎԱՐ, ՂՈՒՐՍԱԼ,ՉԿԱԼՈՎ, ՓԱՄԲԱԿ, ՖԻՈԼԵՏՈՎՈ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԵՎ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ

Հարգելի՛ գործընկերներ,

Կից ներկայացնում եմ Լոռու մարզի անվանափոխման ենթակա բնակավայրերի ցանկը, որը մշակվել և կազմվել է ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից և ինձ է ուղարկվել ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի գրությամբ (կցվում է):

Հաշվի առնելով, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 33- րդ կետի համաձայն՝ համայնքի կամ համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրի անվանափոխության վերաբերյալ համաձայնություն տալը համայնքի ավագանու լիազորությունն է, ինչպես նաև անվանափոխման ենթակա բնակավայրերի հարցը նախկինում ևս քննարկվել է, խնդրում եմ՝ ևս մեկ անգամ կազմակերպել Ձեր համայնքի մասով հարցի քննարկումը **ավագանու հերթական կամ արտահերթ նիստում**, անհրաժեշտության դեպքում քննարկմանը հրավիրել ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի մասնագետներին (հեռախոս՝ 093-88-61-20, Գեղամ Բաղալյան):

Համաձայն «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջարկում եմ ուսումնասիրել մասնագիտական հանձնաժողովի առաջարկությունները և **բացասական եզրակացության դեպքում ներկայացնել նոր հիմնավորված անվանում**՝ հաշվի առնելով տվյալ վայրի աշխարհագրական, պատմական, մշակութային,

կատ. Դ. Մանուչարյան
հեռ. 0322-4-09-27

ազգագրական, կենցաղային և այլ տեղական պայմանները, զերծ մնալով անձնանուններից, ինչպես նաև օտարամուտ, կրկնվող, անբարեհունչ տեղանուններից:

Ավագանու կայացրած որոշման մասին տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետարան:

Ժամկետ՝ մինչև 13.09.2019թ:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Հարգանքով՝ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

8/22/2019

X

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Գ.ՄԱՐԿՈՍՅԱՆ

կատ. Դ. Մանուչարյան
հեռ. 0322-4-09-27

ՑԱՆԿ

ՀՀ Լոռու մարզի բնակավայրերի անվանափոխման առաջարկների

N	Գործող անվանումը		Առաջարկվող անվանումը	Անվանափոխման անհրաժեշտությունը
	Համայնք	Բնակավայր		
1	Ալավերդի	Ալավերդի քաղաք	Լալվար	օտարամուտ
2		Ջիլիզա գյուղ	Խորակերտ	օտարամուտ
3	Ախթալա	Ախթալա քաղաք	Արծաթահանք	օտարամուտ
4		Ախթալա գյուղ	Սպիտակաշեն	օտարամուտ
5		Առողջարանային կից գյուղ	Հովտանուշ	անբարեհունչ
6		Ծամլոտ գյուղ	Սոճուտ, Հանքաշեն	օտարամուտ
7	Թումանյան	Աթան գյուղ	Գողտրիկ	օտարամուտ
8		Քոքեր կայարանի գյուղ	Քոքայր	անբարեհունչ
9	Տաշիր	Բլագոդարնոյե գյուղ	Երախտիք, Գոհանամք	օտարամուտ
10		Մեդովկա գյուղ	Մեղրուտ	օտարամուտ
11		Կրուգլայա շիշկա գյուղ	Բոլորասար	օտարամուտ
12		Նովոսելցովո գյուղ	Նորաբակ	օտարամուտ
13		Սարատովկա գյուղ	Սարանց	օտարամուտ
14	Արջուտ	Արջուտ կայարանին կից գյուղ	Արջուտավան	անբարեհունչ
15	Գյուլագարակ	Պուշկինո գյուղ	Պուշկինավան	օտարամուտ
16	Լոռի Բերդ	Ցաղդան գյուղ	Եղիտանք	օտարամուտ
17		Սվերդլով գյուղ	Դորբանդ	օտարամուտ
18	Հալավար	Հալավար գյուղ	Լեռնաջուր	օտարամուտ
19		Գյուլուդարա գյուղ	Ծաղկոց	օտարամուտ
20		Հայդարլի գյուղ	Գուշար	օտարամուտ
21		Քիլիսա գյուղ	Ժամատուն	օտարամուտ
22	Ղուրսալ	Ղուրսալ գյուղ	Արջովիտ, Գարդման	օտարամուտ
23	Մեծավան	Միխայլովկա գյուղ	Տաշրաբակ	օտարամուտ
24	Չկալով	Չկալով գյուղ	Մոշուտ	օտարամուտ
25	Սարչապետ	Պետրովկա գյուղ	Պետրոսաբակ	օտարամուտ
26		Պրիվոլնոյե գյուղ	Լայնշի, Լայնազատ	օտարամուտ
27	Փամբակ	Փամբակ կայարանին կից գյուղ	Փամբակավան	անբարեհունչ
28	Օձուն	Կարմիր Աղեկ գյուղ	Աղեկ գյուղ	անբարեհունչ
29	Ֆիոլետովո	Ֆիոլետովո գյուղ	Մարգավետ	օտարամուտ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Վանաձոր, Ս. Մնացականյանի 8/1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 13-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.04.2010թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ալավերդի քաղաքի անվանափոխության մասին

(Զեկ.՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 30-րդ կետով, հաշվի առնելով Ալավերդի քաղաքի անվանափոխության մասին առաջարկները, մերժելու Ալավերդու քաղխորհրդի նստաշրջանի 1996թ. հունվարի 11-ի որոշումը, Ալավերդի համայնքի ավագանու 18.05.2007թ. Հ 33-Ա որոշումը, 2010թ. ապրիլի 9-ին քաղաքապետարանում կայացած հասարակական քննարկման արդյունքում արձանագրված տեղեկությունները

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Մերժել Ալավերդի քաղաքի անվանափոխության մասին առաջարկը:

Որոշումն ընդունվել է միաձայն՝ 10 կողմ:

1.	ԱՎԵՏՅԱՆ	ՄԵՐՈՒԺԱՆ
2.	ԵՐԻՑՅԱՆ	ԿԱՄՈ
3.	ԷՎՈՅԱՆ	ԳԱԳԻԿ
4.	ԹԱՆԴԻԼՅԱՆ	ՀՐԱՉՅԱ
5.	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	ԱՐՄԵՆ
6.	ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	ՌՈՒԲԵՆԱԼԵ
7.	ՍԱՐԳՍՅԱՆ	ՀՐԱՆՏ
8.	ՍԻՄՈՆՅԱՆ	ԿԱՐԵՆ
9.	ՎԱՐԴԱՆՅԱՆ	ԿԱՄՈ
10.	ՏԻՏԱՆՅԱՆ	ԱՐՄԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.Վ. ԷՎՈՅԱՆ